

**ՈՒՋՄԱԲԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԷՈՒՅՅՈՒՆԸ ԵՎ
ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒՅՅՈՒՆԸ ԵՐԱՇԽԱԿՈՐՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ ***

Արեն Սարգսյան

Բանալի բառեր՝ ռազմական քաղաքականություն, անվտանգություն, զինված ուժեր, բարեփոխում, վերափոխում, արդիականացում, արդյունավետություն, մարտունակություն, սպառազինություն, քաղաքացիական վերահսկողություն:

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է մի տարածաշրջանում, որտեղ ցանկացած ժամանակ դիվանագիտությունը կարող է տեղի տալ ռազմական ուժի օգտագործմանը: Հայաստանի և հայ հասարակության անվտանգությունն ապահովելու համար պետք է համաքայլ ընթանալ աշխարհաքաղաքական բոլոր զարգացումներին: Ներկայումս փոփոխվում են նաև Հայաստանի շուրջը ծևավորվող արտաքին իրողությունները, և Հանրապետությունը, իր կայացմանը զուգընթաց, ավելի է ներգրավվում ռազմաքաղաքական գործընթացներում, անդամակցում տարածաշրջանային և միջազգային զանազան կազմակերպություններին՝ ստանձնելով բազմաթիվ պարտավորություններ: Ավելին՝ անվտանգության երաշխավորման գործում որպես առանձնացված խնդիր ունենալով Ղարաբաղյան հակամարտությունը՝ Հայաստանի Հանրապետությունը առավել ուշադրություն է դարձնում ռազմական անվտանգության հիմնահարցերին: Ինչպես նշում է ՀՀ Նախագահ Ս.Սարգսյանը՝ Ադրբեջանի իշխանությունը չի թաքցնում, որ քաղաքական ու ռազմական միջոցների համադրմամբ ձգտում է մշտական լարվածություն ստեղծելու, ինչը պարզ շանտաժի քաղաքականություն է [1]: Հետևաբար, զինված ուժերի՝ որպես ազգային անվտանգության հիմնական երաշխավորի կարողությունների շարունակական զարգացումն ապահովելու համար չկա այլ տարբերակ, քան պաշտպանական բարեփոխումների լիարժեք, շարունակական և հետևողական իրագործումը:

Ջինված ուժերը այսօր և տեսանելի հեռանկարում Հայաստանի անվտանգության հիմնական երաշխավորն է, վերջինիս հիմքը: Հայաստանի զինված ուժերը ազգային ոգու, գաղափարախոսության կրողն ու համազգային շահերի հիմնական արտահայտիչն է, պետության առանձնահատուկ հպարտությունը, ազգի կենսունակության խորհրդանիշը, ազգային արժեքների ու սրբությունների հիմնական պահապանը: Ռազմաքաղաքական բարեփոխումների արդյունավետությունը կախված է մի շարք խնդիրների հաջող լուծումից, որոնցում առաջին հերթին կարելի է ընդգծել զինված ուժերի կառուցվածքակադրային համակարգի կատարելագործումը՝ նպատակ ունենալով ապահովելու երկրի ռազմական անվտանգությունը երաշխավորող բանակ [2]:

Հայաստանի Հանրապետությունում զինված ուժերի զարգացման պատասխանատու փուլում անժխտելի է, որ ներկա և ապագա սպառնալիքների դիմակայմանը պատրաստ լինելու համար չկա որևէ այլ ուղի, քան իրական, միևնույն ժամանակ իրատեսական բարեփոխումների իրականացումը: Մինչ օրս նշված ուղղությամբ կատարվել են զգալի աշխատանքներ, սակայն այդ ընթացքում ի հայտ են եկել այնպիսի խնդիրներ ու բացթողումներ, որոնք որոշ ենթադրություններում փորձի բացակայության և ֆինանսա-

* Հոդվածն ընդունվել է 15.11.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել քաղ. գիտ.դոկտոր, պրոֆեսոր՝ Տ.Քոչարյանը:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

կան մեծ ներդրումների պահանջարկի պատճառով անցյալում եղել են կամ աննկատ, կամ դրանց լուծումը հետաձգվել է անորոշ ժամանակով:

Ռազմաքաղաքական բարեփոխումների ընթացքի, առկա խնդիրների ու դրանց լուծման ուղիների վերաբերյալ համընդգրկուն ուսումնասիրությունը պահանջում է հետևյալ հարցերի առանձնացում, մասնավորապես՝

- ի՞նչ են բարեփոխումները,
- ի՞նչ է անհրաժեշտ դրա իրականացման համար,
- բարեփոխվու՞մ, վերափոխվու՞մ, թե՞ արդիականացվում են ՀՀ զինված ուժերը,
- ի՞նչն է նախատեսվում բարեփոխել,
- ե՞րբ կարող է արձանագրվել բարեփոխումների հաջող ավարտը:

Այս հարցերի պարզաբանումը արդիական էր ինչպես երեկ, այնպես էլ այսօր և ապագայում, քանի որ ցանկացած գործընթացի հաջողությանը մշտապես սպառնում է առօրեականությունը, սովորույթի ուժը, այլ կերպ ասած՝ հիմնական նպատակի կամ գերխնդրի գիտակցման նվազումը:

«Բարեփոխումները» ամենաընդհանուր ձևակերպմամբ կարելի է բնորոշել որպես առավելապես ամենօրյա ու երկարաժամկետ բնույթ կրող գործողությունների ամբողջություն՝ ուղղված գերխնդրի և դրան առնչվող հիմնական նպատակների իրականացմանը աստիճանական, կազմակերպված ու փոխկապակցված գործողությունների միջոցով: Իր երկարաժամկետ բնույթի պատճառով բարեփոխումներին մշտապես սպառնում է առօրեականությունը, ընդհանուր նպատակի ձգտման և գերխնդրի գիտակցման թուլացումը: Մինչդեռ բարեփոխումների համար անհրաժեշտ են առկա խնդիրների լուծման նոր մեթոդների համակարգ և այդ մեթոդների իրագործմանն աջակցող միջոցների հատկացում ու կիրառում:

«Ռազմական ռեֆորմ» կատեգորիայի բովանդակությունը մեկնաբանվել է նաև ռուսական և մյուս արտասահմանյան վերլուծաբանների աշխատություններում: Մասնավորապես, Օ.Վիկտորչիկը և Վ.Ռոմանչուկը պաշտպանության բնագավառի բարեփոխումը բացազատում են որպես պետության ռազմական քաղաքականության, բանակաշինության, պաշտպանության համակարգի մեջ արմատական փոփոխությունների ամբողջություն, որը նպատակ ունի պատերազմական իրավիճակներում զինված ուժերը բերելու պատրաստվածության պատշաճ մակարդակի՝ համապատասխանեցնելով երկրում առկա ներուժին ու ազգային-պետական միջոցներին, որոնք կարող են իրականացվել իշխանության մարմինների որոշմամբ՝ պետաիրավական և կազմակերպական միջոցների հաշվին [3]: Իսկ Ի.Կիրիլովը ռազմական քաղաքականության հիմնատարրերի վերլուծության համատեքստում որպես զինված ուժերի արդիականացման ուղղություններ առանձնացնում է ռազմական ոլորտի կառավարման պլանավորան կատարելագործումը, զորքերի կառուցվածքի և տեղակայման օպտիմալացումը, պաշտպանության հարցերում տեղեկատվության անվտանգության երաշխավորումը՝ ներբեռնելով տեղեկատվական տեխնոլոգիական նորագույն ձեռքբերումները, զորատեսակների նյութատեխնիկական ու կադրային վերագինումը, ինչպես նաև նախագորակոչային տարիքի քաղաքացիների պատրաստումը զինվորական ծառայությանը [4]:

Ելնելով այս մոտեցումից՝ Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական բարեփոխումները ձևակերպվեցին որպես ՀՀ զինված ուժերի գործունեության ընթացակարգերի, կառուցվածքի և խնդիրների վերափոխմանն ուղղված միջոցառումների համախումբ և որպես հիմնական նպատակ դիտարկվում է քաղաքացիական վերահսկողության և պաշտպանական պլանավորման ու կառավարման ժողովրդավարական հիմնարար սկզբունքների վրա հիմնված, արդիական ռազմական պահանջներին հա-

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

մապատասխանող, առավել ձկուն և ժամանակակից պաշտպանության համակարգի՝ ներառյալ զինված ուժերի ստեղծումը, որն ի գործու կլինի արդյունավետորեն ապահովելու երկրի ռազմական անվտանգությունը, պաշտպանելու ազգային անվտանգության հիմնարար արժեքները, օպերատիվ արձագանքելու բոլոր ձգնաժամային իրավիճակներին և ապահովելու ՀՀ միջազգային պարտավորությունների կատարումը [5]:

ՀՀ կողմից որդեգրված ռազմաքաղաքական բարեփոխումների հաջող իրականացման համար անհրաժեշտ է հետևյալ հիմնական մոտեցումների կիրառումը.

- նպատակի և հիմնական խնդիրների մշտապես գիտակցում,
- փոփոխությունների իրատեսականություն և աստիճանականություն,
- գործողությունների փոխկապակցվածություն,
- գործընթացն առաջ տանելուն ունակ անձնակազմի զարգացում,
- որոշումների կայացման ձկունություն և արդյունքների անընդհատ վերլուծություն,
- հասարակության իրազեկում, պետության և հասարակության աջակցություն բարեփոխումների իրականացմանը:

Այս առումով բանակի «վերափոխումը» թվում է առավել հեշտ իրականանալի, քանի որ քաղաքական որոշման դեպքում այն ենթադրում է կտրուկ և համարձակ փոփոխություններ՝ կարճ ժամկետներում, հնի վերացում և նորի ստեղծում, թեև պահանջում է նաև հսկայական միջոցներ ու ներդրումներ: Վերափոխումը, միաժամանակ, մեծ ռիսկեր է պարունակում, քանի որ հնարավոր սխալների հետևանքները կարող են թանկ լինել պետության համար, ինչը կոնկրետ Հայաստանի համար անընդունելի է:

«Արդիականացումը» ենթադրում է ռազմական կարողությունների ընդլայնում՝ զորքերի և սպառազինության տեխնիկական ու տեխնոլոգիական առաջընթացով, նույնպես չի կարող ինքնին ապահովել պաշտպանական ոլորտի զարգացմանն առնչվող համակարգային խնդիրները:

Անվտանգության երաշխավորվածությունը ապահովելու համար առաջնային կարևորություն ունի անձի, հասարակության և պետության կենսագործունեության ուղղորտներում հետևողական փոփոխությունների անցկացումը: Անվտանգության քաղաքականության իրականացման արդյունավետությունը անմիջականորեն առնչվում է ռազմական քաղաքականության ու դրա իրականացնող իշխանական մարմնի գործունեության մակարդակից [6]: Ռազմաքաղաքական բարեփոխումների կարևորագույն մասը զինված ուժերի վերակառուցումն է, որը ներառում է կառավարչական կառուցակարգերի հետագա կատարելագործումը, մարտական կարողությունների, գործունեության օպերատիվության և կայունության բարձրացումը, ժամանակակից զինատեսակներով ու սպառազինությամբ համարումը: Պետությունն իր անվտանգության ապահովման համար անհրաժեշտ ռազմական հզորության չափը որոշում է՝ ելնելով երկրին սպառնացող առկա և հնարավոր վտանգի ծավալներից, իր տնտեսական հնարավորություններից, ռազմաքաղաքական իրավիճակից, ուժերի տարածաշրջանային հաշվեկշիռից, ընդհանուր և տարածաշրջանային անվտանգության համակարգում իր ստանձնած պարտավորություններից: Այս գործոնների հաշվառմամբ են մշակվում զինված ուժերի զարգացման ընթացիկ և հեռանկարային ծրագրերը, դրանցով են պայմանավորված ռազմական շինարարության շատ հարցեր, այդ թվում նաև զինված ուժերի անձնակազմի թվաքանակի սահմանումը, համալրման տարբեր մոտեցումների համադրումը [7]:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետության որպես զինված ուժերի զորակոչային ու պայմանագրային համալրման համակարգ ունեցող երկրի համար անհրաժեշտ է առանձնացնել պաշտպանական համակարգի հետևյալ 5 գերխնդիրները.

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

1. երկրի տարածքի և բնակչության պաշտպանությունը ցանկացած արտաքին ազդեցիկից,

2. օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ աջակցությունը քաղաքացիական իշխանություններին արտակարգ դրությունների կամ աղետների ժամանակ,

3. գորահավաքային ռեսուրսների նախապատրաստումը և պահեստազորի շարունակական վարժանքն ու պատրաստությունը,

4. միջազգային և տարածաշրջանային անվտանգությանն աջակցելու պատրաստակամությունից բխող մասնակցությունը բազմազգ գործողություններին,

5. զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների դաստիարակումը որպես հասարակության լիարժեք ու պատասխանատու սուբյեկտներ:

Հայաստանի ռազմաքաղաքական բնագավառում անցկացվող բարեփոխումների գլխավոր նպատակը այս 5 խնդիրների լիարժեք ապահովումն է հնարավորինս քիչ միջոցներով, արագ ու օպերատիվ կերպով՝ գլխավոր չափորոշիչ ունենալով արդյունավետությունը: Արդյունավետությունն ապահովելու համար պետք է հրատապություն ու արագություն ցուցաբերել գործողություններում, իսկ առաջարկությունների ներկայացման և որոշումների կայացման գործում շտապողականությունը նպատակահարմար չէ:

Բարեփոխումների առաջին փուլը վերաբերում էր պաշտպանության բնագավառի իրավական հենքի զարգացմանն ու վերափոխմանը, որին բնականաբար պետք է հաջորդի «անցումը իրավականից ռազմականի»: Այստեղ կարևորվում է այն, որ ՀՀ նախագահի կողմից 2007 թվականի հունիսին հաստատվեց Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումների 2007-2015 թվականների ծրագիրը, որի շրջանակներում, բացի քաղաքական նշանակություն ունեցող ՀՀ ռազմական դոկտրինից, պաշտպանության բնագավառում արտահայտված խնդիրներին համապատասխան, ընդունվեցին բազմաթիվ նոր իրավական ակտեր, ինչպես նաև փոփոխություններ և լրացումներ կատարելով՝ հստակեցվեցին գրեթե բոլոր գործող նորմատիվ իրավական փաստաթղթերը:

Սակայն, հաջորդ փուլում կարևոր էր, որ օրենսդրորեն ձևակերպված նորացումները գործնականում հստակ կիրառվեն պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից, սովորույթի համաձայն չչարունակվեն իրականացվել այն նույն գործառնությունները որոնք գործում էին նախկինում: Դրա հավանականությունը որոշակիորեն հնարավոր է, որից ելնելով էլ պաշտպանական բարեփոխումների գործնական կիրառելիությունն ապահովելու համար որոշակի ժամանակ է պահանջվում: Այստեղ որպես գերակայություն կարելի է ներկայացնել կադրային, ռազմական կրթության, հասարակության իրազեկման, վարչական կառավարման, զորային կառույցի սահմանման, պաշտպանական պլանավորման և բյուջետավորման ենթադրությունները, որոնք ունեն փոխկապակցող բնույթ, այսինքն՝ այլ ենթադրությունների բարեփոխումները հաջող կրնթանան, եթե հաջողություն գրանցվի թվարկված, և առաջին հերթին կադրային քաղաքականության հարցերում: Այս համատեքստում հատուկ կարևորություն է ստանում ՀՀ զինված ուժերի կադրային քաղաքականության և դրան սպասարկող ռազմական կրթության համակարգի բարեփոխումը, որոնք պետք է համապատասխանեցվեն պաշտպանական քաղաքականության նպատակների հետ: Ռազմական կրթություն ասելով՝ չպետք է հասկանալ միայն սպայական կազմի զարգացումը, այլ նաև ամբողջ զինվորական անձնակազմի կրթվածության, բարոյահեգաբանական վիճակի և բանակ-հասարակություն կապի արդիականացումը:

Մասնավորապես, բարեփոխումների արդյունքում պետք է ունենալ զինվորական կադրերի պատրաստման այնպիսի կատարյալ համակարգ, որը, մի կողմից՝ լրիվ բա-

վարարի զինված ուժերի պահանջարկը, մյուս կողմից՝ իր որակական բարձր մակարդակի շնորհիվ ԱՊՀ-ի և արտասահմանյան որոշ երկրներից Հայաստանում կադրեր պատրաստելու հնարավորություն առաջացնի: Անհրաժեշտ է նաև կատարելագործել կադրերի նշանակման, որակավորման և առաջխաղացման համակարգը, որպեսզի բանակային միջավայրում իսպառ բացառվի հովանավորչությունը, ծառայության անհրաժեշտ բոլոր որակներին լիարժեք չհամապատասխանող անձանց առաջխաղացումը, զինծառայողների շրջանում մշտապես խրախուսվի ինքնակատարելագործման, մասնագիտական որակավորման բարձրացման ձգտումը: Փորձառու, երիտասարդ և եռանդուն զինվորական մասնագետների ներդաշնակ զարգացումը՝ հայ զինվորականության լավագույն ավանդույթների պահպանմամբ և բազմապատկմամբ, հանդիսացել և միշտ էլ հանդիսանալու է ՀՀ զինված ուժերի բարեփոխումների ուղեկիցը, քանզի հայոց բանակը կարող է լինել հզոր և մարտունակ միայն վերջինիս կազմում ունենալով զինվորականի պատիվը պահող ու պաշտող նվիրյալներ [8]:

Միաժամանակ, հարկ է նշել նաև, որ բարձր մրցակցության և շուկայական տնտեսության պայմաններում զարգացող ուղղություններում, ինչպիսիք են՝ կապը, ռազմական տեղագրությունը, ռադիոէլեկտրոնային պայքարը, հետախուզությունը, թիկունքային ապահովումը և պաշտպանական գնումների համակարգը, հնարավոր է բարեփոխումներ իրականացնել առավել արագ ու արդյունավետ, քանի որ առկա է նաև արտասահմանյան առաջավոր փորձի ներբեռնման ու տեղայնացման հնարավորությունը: Այսինքն՝ ժամանակակից աշխարհը և տեխնոլոգիական զարգացումները կարող են օժանդակել նշված ուղղությունների բարեփոխումներին: Նշվածի համադրմամբ ՀՀ պաշտպանական բարեփոխումների շրջանակներում մշակվել է և կարելի է փաստել, որ հաջողությամբ իրագործվեց ՀՀ ՋՈՒ զարգացման միջնաժամկետ պլանը՝ մինչև 2015 թվականը, որում հստակ նատանշվեցին երկրի պաշտպանության ոլորտի կատարելագործման ուղղությամբ Հայաստանի գործընկերների հետ հետագա համագործակցության առաջնահերթ ոլորտները: Հաջողության գրավականը հանդիսացավ նաև ՀՀ պաշտպանական ռազմավարական վերանայումը, որը երկրի պաշտպանական համակարգի և դրա գործունեության ռազմավարության վերանայմանն ուղղված միջոցառումների ամբողջություն է և նպատակ ունի գնահատելու ՀՀ պաշտպանական համակարգը առկա և երկարաժամկետ հեռանկարում ակնկալվող սպառնալիքներին և մարտահրավերներին դիմակայելու կարողությունների տեսակետից բացահայտել համակարգի զարգացման հնարավորությունները: Տվյալ գնահատման արդյունքները հիմք են հանդիսանում պաշտպանության ոլորտի հեռանկարային զարգացման ծրագրերի մշակման, հետևաբար, պաշտպանական բարեփոխումների համար [9]: Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացը, որի արդյունքների իրականացմանն ուղղված գործողությունները միավորվեցին մեկ միասնական փաստաթղթում՝ ՀՀ զինված ուժերի զարգացման պլանում, որը երաշխավորում է ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության հիման վրա երկրի պաշտպանության կառավարումը [10]:

Եվ վերջում կարևորվում է նաև այն հարցը, թե ե՞րբ կարող է արձանագրվել բարեփոխումների հաջող ավարտը: Այստեղ պետք է նշել, որ ժամանակակից զարգացող աշխարհակարգում և հատկապես Հայաստանի Հանրապետության շուրջ ձևավորված անվտանգային ու ռազմաքաղաքական իրողությունների պայմաններում պաշտպանության բնագավառի բարեփոխումները ունենալու են մշտական բնույթ, սակայն որոշակիորեն կփոխվի դրանց անցկացման ինտենսիվությունը և բովանդակային մի շարք ասպեկտներ: ՀՀ պաշտպանական բարեփոխումների գերխնդիրը մարտունակությամբ

հակառակորդի զինված ուժերի նկատմամբ ՀՀ զինված ուժերի գերազանցության ապահովումն է, զինված ուժերում այնպիսի չափանիշների ստեղծումը և ներդրումը, որոնք լիարժեքորեն կհամապատասխանեն Հայաստանի ազգային անվտանգության առանձնահատկություններին՝ ամբողջությամբ լուծելով ռազմական անվտանգության ազգային խնդիրները, միաժամանակ փոխգործակցելիության բավարար հնարավորություններ կունենան՝ Հայաստանի միջազգային վարկի և հեղինակության բարձրացմանը համարժեք միջազգային անվտանգության ապահովման չափաբաժին ստանձնելու համար [11]:

Որպես անցկացված բարեփոխումների արդյունավետությունը վկայող փաստեր կարելի է արձանագրել ՀՀ ռազմական դոկտրինի, օրենսդրական հիմնարար ակտերի ընդունումը և դրանից բխող բազմաթիվ ռազմավարական բնույթի փաստաթղթերի կիրառումը, ՀՀ անվտանգության սպառնալիքների հիմնավորումները և զարգացման սցենարների մշակումը, ռազմավարական պլանավորման նկատառումները, անվտանգության սպառնալիքների չեզոքացման առաքելությունները, ռազմավարական առաջադրանքների որոշումն ու սահմանումը, ռազմական արդյունաբերության, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրերը և մի շարք այլ պաշտպանական պլանավորման հիմնարար ծեռքերումներ:

Այսօր հայկական բանակի հարաճուն զարգացման հիմքում համազգային մոտեցման շնորհիվ երկրի պաշտպանական ոլորտում հաջողությամբ իրականացվում են մեծածավալ աշխատանքներ, մասնավորապես ՀՀ զինված ուժերի ստորաբաժանումները համալրվում են նորագույն ռազմական տեխնիկայով և սպառազինությամբ, պաշտպանական գոտիներում և տեղամասերում կատարելագործվում են ամրաշինական կառույցները, տարեցտարի բարելավվում են զինծառայողների ծառայության, կենցաղի, հանգստի և ժամանցի պայմանները, առանձնակի ուշադրություն է դարձվում զինծառայողների, զոհված ազատամարտիկների, հաշմանդամների և նրանց ընտանիքների սոցիալական ու բնակարանային խնդիրների լուծմանը, իրականացվում են աննախադեպ ծավալների կապիտալ և վերանորոգման շինարարական աշխատանքներ: Այս բոլոր միջոցառումների շնորհիվ օրեցօր ավելանում են ԶՈւ մարտական կարողությունները, ավելի է մեծանում վստահությունը սեփական ուժերի նկատմամբ, որի պարագայում ՀՀ զինված ուժերը հանդես է գալիս որպես մրցունակ, անընդհատ կատարելագործվող, բարեփոխվող և զարգացման ուղին բռնած կառույց՝ առաջնային կարևորության նպատակ ունենալով Հայաստանի ռազմական անվտանգության երաշխավորումը [12]:

Միևնույն ժամանակ, պետք է գիտակցել, որ մոտ և ապագա հեռանկարում հնարավոր են փոփոխություններ նաև Հայաստանի Հանրապետության անվտանգության սպառնալիքների ցանկում, որն իր հերթին լրացումների ու հստակեցումների անհրաժեշտության կհանգեցնի ռազմաքաղաքական բնույթի բոլոր ծրագրային միջոցառումներում պահանջելով դրանք կատարելագործել շարունակական բարեփոխումների ծնաչափով: Այսօր անընդհատ փոփոխվող ու զարգացող աշխարհում դրանից խուսափելն անհնար է, և որպեսզի Հայաստանի Հանրապետության զինված ուժերը մշտապես պատրաստ լինի արձագանքելու տարածաշրջանային և համաշխարհային անվտանգության միջավայրի փոփոխություններին, պաշտպանական բարեփոխումների հետևողական իրականացմանն այլընտրանք չկա: Փոխարենը հարկավոր է վստահ լինել, որ բարեփոխումների ծրագրավորված փուլերն ավարտելուց, այսինքն՝ հաստատված ծրագրերը համապատասխան միջոցներով ապահովելուց և կյանքի կոչելուց հետո ռազմաքաղաքական ղեկավարության և զինված ուժերի անձնակազմի համար բա-

րեվիզիոնները կլինեն առավել դյուրին, կանցնեն ավելի հարթ ու արդյունավետ՝ ինտեգրելով Հայաստանի շուրջ ծնավորվող ռազմաքաղաքական և անվտանգային միջավայրին՝ դրանով իսկ երաշխավորելով Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգաբնակչության անվտանգությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարին կից կոլեգիայի և հայկական բանակի 23-րդ տարեդարձին նվիրված նիստին // <http://www.president.am/hy/press-release/item/2015/01/26/President-Serzh-Sargsyan-meeting-in-the-Ministry-of-Defence/>
2. Քոթանջյան Հ.Ս., Պաշտպանական բարեփոխումների ռազմավարություն // Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Եր., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2010, էջ 719-722
3. Викторчик О.Я, Романчук В.П., Актуальные проблемы военной политики, Котово, НВВИКУ, 1996, стр. 28
4. Кирилов И.В., Военная политика, военно-политические процессы и проблемные аспекты в системе обеспечения военной безопасности в современной России, Дисс. на соискание ученой степени канд.пол.наук, Н.Новгород, 2015, стр. 14
5. Պաշտպանական բարեփոխումներ, ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայք // <http://www.mil.am/hy/68/230/265>
6. Скоков С.И., Выговский И.И., Проблемы и направления совершенствования автоматизированного управления подготовкой и ведением военных действий, Военная мысль № 9, 2011, стр. 86
7. Քոչարյան Տ.Տ., Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգությունը ազգային անվտանգության համատեքստում, Եր., 2012, էջ 245
8. Օհանյան Ս., 21-րդ դարի բանակը, Եր., 2007, էջ 64
9. ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայում, ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնական կայք // <http://www.mil.am/hy/68/230/266>
10. Օհանյան Ս., ՀՀ զինված ուժերի զարգացման 2011-2015թթ. միջնաժամկետ պլանը երաշխավորում է ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության հիման վրա պաշտպանության կառավարումը // <http://armenpress.am/arm/news/659760/s-ohanyan-hh-zu-zargacman-2011-2015tt-mijnazhamket-plany.html>
11. այք // <http://www.mil.am/hy/68/230/265>
12. ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ելույթը ՀՀ զինված ուժերի կազմավորման 20-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառման ժամանակ, 28.01.2012թ. // <http://www.mil.am/hy/news/2095>

ԱՄՓՈՓԱԳԻՐ
Ռազմաքաղաքական բարեփոխումների էությունը և արդյունավետությունը
Երաշխավորող հանգամանքները
Արեն Սարգսյան

Հոդվածում ներկայացված վերլուծությունը փաստում է, որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը կարողանում է աշխարհին ներկայանալ ձկունությամբ և բարեփոխվելու ունակությամբ: Հայաստանի տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային և մի շարք ոլորտներում ընթացող բարեփոխումների պայմաններում մշակվում և իրականացվում են համալիր միջոցառումներ՝ ուղղված զինված ուժերի մարտունակության բարձրացմանն ու արդի մարտահրավերներին դիմակայելու կարողության ապահովմանը: Ռազմաքաղաքական բարեփոխումների արդյունավետությունը կախված է պաշտպանական բնագավառում դիտարկվող, միմյանց հետ փոխկապակցված և հաջորդականությունը պայմանավորող խնդիրների ու բացթողումների նախանշումից, լուծմանն ուղղված միջոցառումների ծրագրավորումից և դրանց հաջող իրականացումից:

РЕЗЮМЕ

Суть военно-политических реформ и обстоятельства, гарантирующие их эффективность
Арен Саркисян

Ключевые слова: военная политика, безопасность, вооруженные силы, реформа, трансформация, модернизация, эффективность, боеспособность, вооружение, гражданский контроль.

Представленный в статье анализ доказывает, что Вооруженные силы Республики Армения могут предстать перед миром способным своей гибкостью и умением реформироваться. В условиях реформ, проводимых в экономической, политической, социально-духовной и других сферах Армении, разрабатываются и внедряются комплексные мероприятия, направленные на повышение боеготовности вооруженных сил и обеспечение противодействия современным угрозам. Эффективность военно-политических реформ зависит от взаимосвязанных друг с другом проблем и недостатков, а также программирования мероприятий, направленных на решение данных проблем и успешного осуществления этих программ.

SUMMARY

The Essence of the Military-Political Reforms and Circumstances
Ensuring their Effectiveness
Aren Sargsyan

Keywords: defense policy, security, armed forces, reform, transformation, modernization, efficiency, fighting ability, weapons, civilian control.

The analysis shows that the RA Armed Forces can face the world capable of its flexibility and ability to reform. In the context of economic, political, social, spiritual and other reforms in Armenia, a number of comprehensive measures, improving combat readiness of the Armed Forces and counteracting modern threats are being developed and implemented. The effectiveness of the military-political reforms depends on the set of activities aimed at solving problems and deficiencies in the field of defense.